ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«25» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի տեղակալ _____ Հ. Այունց

ԳԲԽ-52/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էլայզեռ» ՍՊԸ-ի 13.05.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էլայզեռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Էլայզեռ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/36 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մարտի 4-ի N 3 արձանագրության 3.1 և 4.1 կետերով նվազագույն գին ներկայացրած և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՍՊ» ՍՊԸ-ն, իսկ 4.2 կետով հանձնաժողովը որոշել է

1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի իսկությունը ստուգելու նկատառումներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 71-րդ կետը, 2016թ. մարտի 31-ի N 4 արձանագրության 1.2 կետով որոշում է կայացրել դիմել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, որպեսզի տրամադրվի եզրակացություն՝ մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի կատարման արդյունքում առաջացած հարկային պարտավորություններն օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված լինելու վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի 26-ը ապրիլի 2016թ. N 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը քննարկել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված գրավոր եզրակացությունը և որոշել է, ի լրումն նախորդ գրության, ուղարկել «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից մրցույթին ներկայացրած պայմանագրի պատճենը և պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կատարման վերաբերյալ տեղեկանքը:

Գնահատող հանձնաժողովի 2016թ. մայիսի 5-ի N 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել չսպասել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ի լրումն ուղարկված գրության պատասխանին և որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը շարունակել, իսկ 1.3 կետի համաձայն, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, որոշել է «ՍՊ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/36 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է www.gnumner.am կայքում՝ (06/05/2016թ.-ից մինչև 16/05/2016թ. ժամը 23:55 ներառյալ):

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 31-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերը, 45-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ մասի 1-ին կետը, 48-րդ հոդվածի 2-րդ մասը, նշել է, որ գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերը, քանի որ իրենց ունեցած տեղեկությունների համաձայն՝ «ՍՊ» ՍՊԸ-ն չունի նախկինում կատարված նմանատիպ համանման պայմանագրեր, իսկ «ՍՊ» ՍՊԸ-ի ներկայացված պայմանագրեը չեն համապատասխանում իրականությանը և կազմված են կեղծ, և այս դեպքում գնահատող հանձնաժողովը մինչև վերջ չի կատարել ուսումնասիրություն և հաղթող է ճանաչել «ՍՊ» ՍՊԸ-ին՝ առանց վերջնական ստուգելու վերջինիս փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, ներկայացված պայմանագրերի իսկությունը՝ խախտելով Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերը:

Բողոքաբերի կարծիքով ստուգման արդյունքում կպարզվի, որ «ՍՊ» ՍՊԸ-ն չունի նախկինում կատարած նման փորձ և չունի պատշաճ կատարված օրինական պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- 4-ը մարտի 2016թ. N 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշումը՝ «ՍՊ» ՍՊԸ-ին ընթացակարգի արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին
- 5-ը մայիսի 2016թ. N 6 արձանագրության 1.3 կետով կայացված որոշումը՝ «ՍՊ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու մասին
- «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 19.05.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-52/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Էլայզեռ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը և հայտնել, որ «ՍՊ» ՍՊԸ-ն չունի նախկինում կատարված նմանատիպ համանման պայմանագրեր, իսկ ընկերության կողմից ներկայացված պայմանագրեը չեն համապատասխանում իրականությանը և

կազմված են կեղծ, իսկ հանձնաժողովը չի կատարել ուսումնասիրություն և հաղթող է ճանաչել «ՍՊ» ՍՊԸ-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.05.2016թ. ԴՎԱ/1379 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով ՀՀ ՊՆ կարիքների համար «Կարագ սերուցքային» ապրանքատեսակի գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել 5 կազմակերպություն, որոնցից գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՍՊ» ՍՊԸ-ն: Վերջինիս սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, ինչն էլ մասնակցի կողմից սահմանված կարգով ներկայացվել է: Որակավորման փաստաթղթերն ուսումնասիրելիս՝ գնահատող հանձնաժողովը ներկայացված նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրի իսկությունը ստուգելու նկատառումով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 71-րդ կետը, որոշում է կայացրել դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին, որպեսզի տրամադրվի եզրակացություն՝ մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի կատարման արդյունքում առաջացած հարկային պարտավորություններն օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված լինելու վերաբերյալ: Քանի որ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունը հստակ չի պատասխանել առաջադրված հարցին, հանձնաժողովը որոշել է ի լրումն պարզաբանում պահանջել: Այնուհետև, հաշվի առնելով զինված ուժերին «Կարագ սերուցքային» ապրանքատեսակով ապահովելու հրատապությունն ու անհրաժեշտությունը, 05.05.2016թ. հրավիրված հանձնաժողովի նիստում որոշվել է մասնակցի տվյալները գնահատել բավարար և ընթացակարգը շարունակել սահմանված կարգով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 19.05.2016թ. ժամը 17:00-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-52/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-52/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Կարագ սերուցքային» ապրանքատեսակի գնման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլայզեռ» ՍՊԸ-ն:

2. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 04.03.2016թ. ժամը 12:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով որոշել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՊ» ՍՊԸ-ին և առաջարկել է ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

3. Ընկերության կողմից սահմանված կարգով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում նաև Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ նախկինում կատարած պայմանագրի պատճենը և պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող տեղեկանքի պատճենը:

4. Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 71-րդ կետը, 31.03.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով որոշել է «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի իսկությունը ստուգելու նկատառումներով դիմել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, որպեսզի տրամադրվի եզրակացություն՝ մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի կատարման արդյունքում առաջացած հարկային պարտավորություններն օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված լինելու վերաբերյալ:

5. Գնահատող հանձնաժողովը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին ուղղված 06.04.2016թ. ԴՎԱ/854 գրությամբ հայտնել է, որ «ՍՊ» ՍՊԸ-ն, որպես մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացրել է «Արտյոմ-Մարինա» ՍՊԸ-ի հետ 14.04.2014թ. կնքված սերուցքային կարագի մատակարարման N 3/4/2014 պայմանագիրը և խնդրել է տրամադրել եզրակացություն՝ նշված պայմանագրի կատարման արդյունքում առաջացած հարկային պարտավորություններն օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված լինելու վերաբերյալ:

6. Ի պատասխան Գնահատող հանձնաժողովի 06.04.2016թ. ԴՎԱ/854 գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն իր 19.04.2016թ. թիվ 04/6-1/12805-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն մրցույթով պայմանավորված պայմանագրերի հաշվառում չի վարում:

7. Գնահատող հանձնաժողովը, քննարկելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը, 26.04.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետով որոշել է, ի լրումն նախորդ գրության, ուղարկել «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից մրցույթին ներկայացրած պայմանագրի պատճենը և պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կատարման վերաբերյալ տեղեկանքը:

8. Գնահատող հանձնաժողովը 26.04.2016թ. ԴՎԱ/1099 գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին է ուղարկել «ՍՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը:

9. Գնահատող հանձնաժողովը 05.05.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1 կետով որոշել է, հաշվի առնելով զինված ուժերին «Կարագ սերուցքային» ապրանքատեսակով ապահովելու հրատապությունը և անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «ՍՊ» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից արդեն իսկ 19.04.2016թ. ներկայացվել է գրավոր եզրակացություն, չսպասել ի լրումն ուղարկված գրության պատասխանին, հիմք ընդունել նախկինում ուղարկված գրավոր եզրակացությունը և որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը շարունակել, ինչպես նաև, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, որոշել է «ՍՊ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել ընթացակարգի հրավերի պահանջներին

համապատասխանող և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

10. Ի պատասխան Գնահատող հանձնաժողովի 26.04.2016թ. ԴՎԱ/1099 գրության ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն իր 16.05.2016թ. թիվ 04/6-1/15153-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գնման գործընթացի շրջանակներում մրցույթով պայմանավորված պայմանագրերի հաշվառում չի վարում, իսկ «ՍՊ» ՍՊԸ-ի և «Արտյոմ-Մարինա» ՍՊԸ-ի, ինչպես նաև «ՍՊ» ՍՊԸ-ի և «Մ. Ար. Է. Գ.» ՍՊԸ-ի միջև, որպես մատակարար և գնորդ, կատարած գործարքների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի տեղեկատվական բազայում տվյալներ չկան:

<u>4. ԳԲԽ-52/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էլայզեռ» ՍՊԸ-ի 13.05.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Կարագ սերուցքային» ապրանքատեսակի գնման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/36» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Էլայզեռ» ՍՊԸ-ի 13.05.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Կարգի 47-րդ կետի 2-րդ կետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը***՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են

գրավոր եզրակացություն: ***Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:***

Հիմք ընդունելով Կարգի 71-րդ կետով իրենց վերապահված իրավունքը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության կողմից ներկայացված տվյալները՝ տվյալ դեպքում պայմանագրերն, Պատվիրատուի 06.04.2016թ. ԴՎԱ/854 գրությամբ ուղարկվել են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ դրանց իսկությունը պարզելու նպատակով:

Պատվիրատուի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն իր 19.04.2016թ. թիվ 04/6-1/12805-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն մրցույթով պայմանավորված պայմանագրերի հաշվառում չի վարում:

Պատվիրատուն 26.04.2016թ. ԴՎԱ/1099 գրությամբ կրկին հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին:

Գնահատող հանձնաժողովը 05.05.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1 կետով որոշել է, հաշվի առնելով զինված ուժերին «Կարագ սերուցքային» ապրանքատեսակով ապահովելու հրատապությունը և անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «ՍՊ» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից արդեն իսկ 19.04.2016թ. ներկայացվել է գրավոր եզրակացություն, չսպասել ի լրումն ուղարկված գրության պատասխանին, հիմք ընդունել նախկինում ուղարկված գրավոր եզրակացությունը և որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը շարունակել, ինչպես նաև, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, որոշել է «ՍՊ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն Պատվիրատուին ուղղված իր 16.05.2016թ. թիվ 04/6-1/15153-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գնման գործընթացի շրջանակներում մրցույթով պայմանավորված պայմանագրերի հաշվառում չի վարում, իսկ «ՍՊ» ՍՊԸ-ի և «Արտյոմ-Մարինա» ՍՊԸ-ի,

ինչպես նաև «ՍՊ» ՍՊԸ-ի և «Մ. Ար. Է. Գ.» ՍՊԸ-ի միջև, որպես մատակարար և գնորդ, կատարած գործարքների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի տեղեկատվական բազայում տվյալներ չկան:

Կենտրոնն արձանագրում է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն վերոնշյալ գրությամբ չի հաստատել Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը, այլ ընդամենը հայտնել է, որ հարկային մարմնի տեղեկատվական բազայում նշված գործարքների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի տեղեկատվական բազայում տվյալներ չկան:

Կենտրոնը գտնում է, որ նման պայմաններում Գնահատող հանձնաժողովը չի կարող մերժել Ընկերության հայտը՝ Կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով:

Կենտրոնն արձանագրում է նաև, որ բողոքաբերի կողմից Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել նաև ԳԲԽ-52/16 բողոքը քննող հանձնաժողովին, ուստի նման պայմաններում Պատվիրատուի կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Ինչ վերաբերում է բողոքի այն պատճառաբանությանը, որ գնահատող հանձնաժողովը մինչև վերջ չի կատարել ուսումնասիրություն և հաղթող է ճանաչել «ՍՊ» ՍՊԸ-ին՝ առանց վերջնական ստուգելու վերջինիս փաստաթղթերի համապատասխանությունը, ապա Կենտրոնն արձանագրում է, որ Կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելը գնահատող հանձնաժողովի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, և տվյալ դեպքում Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով զինված ուժերին «Կարագ սերուցքային» ապրանքատեսակով ապահովելու հրատապությունը և անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ «ՍՊ» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից արդեն իսկ 19.04.2016թ. ներկայացվել է գրավոր եզրակացություն, որոշել է չսպասել ի լրումն ուղարկված գրության պատասխանին և հիմք ընդունել նախկինում ուղարկված գրավոր եզրակացությունը: Հետագայում էլ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ հարկային մարմնի տեղեկատվական բազայում «ՍՊ» ՍՊԸ-ի և «Արտյոմ-Մարինա» ՍՊԸ-ի, ինչպես նաև «ՍՊ»

ՍՊԸ-ի և «Մ. Ար. Է. Գ.» ՍՊԸ-ի միջև կատարած գործարքների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի տեղեկատվական բազայում տվյալներ չկան:

Այսպիսով, գտնում ենք, որ Գնահատող հանձնաժողովի՝ 04.03.2016թ. թիվ 3 արձանագրության 4.1 կետով, 05.05. 2016թ. թիվ 6 արձանագրության 1.3 կետով կայացված որոշումները, ինչպես նաև Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ Ընկերության կողմից Կենտրոնին 13.05.2016թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-52/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան